## <<ՄԵՂՐԻԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>
## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Սյունիքի մարզի Մեղրի համայնք, Աղեսյան փողոց, թիվ 5, meghri-mankapartez@mail.ru
meghri.mankapartez100@gmail.com

Ելից գրություն թիվ 1473 03.07.2025թ.

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

### ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի պարոն Անդրեասյան

Իրազեկում եմ Ձեզ, որ <<Մեղրիի մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը ստացել է 2023թ. ծնված երեխաների բավականին մեծ թվով հայտեր: Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ № 76-Ն որոշման՝ Կրտսեր 1-ին խմբի խտության թույլատրելի չափը կազմում է 20 սան: Այս պահի դրությամբ <<Մեղրիի մսուր-մանկապարտեզ>>-ը ունի 2 Կրտսեր 1-ին խմբի հնարավորություն, որը կապահովի 58 ստացված հայտերից ընդամենը 40 սանի ընդունելություն: Ներկա իրավիճակում մոտավորապես 18 սան կմնա հերթում:

Հիմք ընդունելով քաղաքացիների դիմումների քանակը՝ կատարել եմ նախնական հաշվարկ՝ նոր խումբ բացելու համար: Նախահաշիվը կազմված է սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար:

Իրազեկում եմ նաև, որ կոշտ և փափուկ գույքի որոշակի քանակ մանկապարտեզը ունի և այս պահի դրությամբ կարիք չկա 1 խմբասենյակի ողջ գույքը ձեռք բերել:

Կից Ձեզ եմ ներկայացնում <<Մեղրիի մսուր-մանկապարտեզ>>-ում նոր Կրտսեր 1-ին խումբ բացելու համար կատարված նախահաշիվը:

ՏՆՕՐԵՆ՝ Ս.ՍԱՐԳՍՅԱՆ